

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՍՈՅԻԱԼԻՍՏՆԵՐԸ ԵՒ ԿՐԹՆԸ

Միապետական ծանր լուծը թօթափելուց յետոյ փակ լեղուները բացուեցին ու կաշկանդուած մաքերը ազատութիւն սաացան։ Տեսանք, որ դարաւոր ստրկութեան շղթան փշուր փշուր անող յեղափոխութիւնը ազատութեան արշալոյս աւետեց ու ընդհանուր հրճուանք եռանդ, ոգևորութիւն ներշնչեց անգամ թմրածներին հին կարգի մնացորդները վերցնելու և տեղը ժողովրդականնը, լաւը ազնիւը դնելու։

Այն էլ տեսանք, որ այդ ազատաբար յեղափոխութիւնը հետզհետէ անիշխանականութեան կերպարանք առաւ ու խոստացած ազատութիւնների փոխարէն բռնի, կոպիտ ոյժի դերիշխանութիւնը հտստատեց. սանձարձակութիւնը արդարութեան սկզբունքների վրայ իշխեց. անձի, դոյքի ազատութիւնը փաստօրէն վտանգեց։

Նին կարգի մնացորդների մաքրելու տենչը դարձաւ մի դարմանալի ախտ ու մի կողմից երկրի, զրութեան տէր դարձաւ անփորձ, ժողովրդի տարը, միւս կողմից հին կարգի մնացորդ գաղափարն այնքան ընդարձակուեց, որ երկրում ամեն ինչ վերագնահատուեց ու տապալման արժանացաւ։ Այլ խօսքով. ոչ թէ որոշ սկզբունք գերիշխող դարձաւ, որի համաձայն պէտք էր գնահատել եղածը և քանուիլ կամ փոխել, այլ անձնական տրամադրութիւնը, իսկ այդ նշանակում է չափի, կշուի բացակայութիւն և անիշխանականութեան գերիշխում։

Կասկածից դուրս է, որ ութ ամսուայ ընթացքում յեղափոխական վերաշինութեան գործում շատ արժէքներ

փչացան, սրանց համար միայն ապադայում ավտոսանք պիտի յայտնեն, բայց արդէն ուշ կլինի, կորուսար կմնայ կորուսա:

Այժմ ժամանակը հոգեկան հաւասարակշռութեան խանգարուած ժամանակ է, մտքերի միակողմանիութիւնը շատ է արմատացել ժողովրդի բախտը տնօրինողների մէջ։ Յատկապէս սօցիալիզմի վարդապետութեան պաշտամունքը այժմ ամենքի համար դարձել է պարտաւորական և վայ նրան, որ այդ ուսմունքի երդուեալ, թէկուզ ձեական, հետևողը չէ։ Զէ՞ որ սօցիալիստ լինելը այժմ ամենանուազ առաջինութիւնն է, որ պահանջում է ոչ միայն յեղափոխականից, այլ այն բարեմիտ քաղաքացուց ու անձար դիւղացուց, որոնց համար ընտանեկան կեանքի շրջանակը աշխարհի բախտաւորութեան սկիզբն ու վախճանն է։

Սակայն ժամանակի ուժեղ, տարերային հոսանքին եթէ ամենքս մեր մարդկային տկարութեան պատճառով հարկ ենք տալիս և այս ու այն դիտումով լինի այդ վատ թէ լաւ դիտում այդ թողնենք, սօցիալիստ ենք լինելու, գոնէ մի բանում պէտք է մի քիչ ուշըի գանք, թէ այդ սօցիալիզմի վարդապետութիւն քարոզողն լինչ է և ինչ պահանջներ ունի, ուր է տանում իրեն հետևորդ երկրպագութիւն։

Դժբախտաբար այդ հարցերով, ոչ թէ յեղափոխական մասսան չէ զբաղւում, այն մասսան, որը իր քարոզիչ տուածնորդների համար այս ու այն ընտրութեանը քուէ։ Ների բաղմութեամբ յաղթանակներ է սաեղծում ու իր դերը լաւագոյնս կատարուած համարում, այլ և առաջնորդները, այդ վարդապետութեան առաքեալները իրենք չգիտեն, չեն ուսումնասիրել իրենց վարդապետութեան եռութիւնը, չեն պարզել իրենց համար այն սկզբունքները, որ այդ վարդապետութեան հիմնադիրները և մեկնարանողները մշակել, ուսումնասիրել են։

Սօցիալիզմի տարածման ու դորձնական կեանքում հետզհետէ իրականացման դէպում պատահում է ճիշտ

Նոյն պատմական երկոյթը, ինչ որ առհասարակ նման մեծ վարդապետութիւնների նկատմամբ է եղել ցայսօր։ Այսինքն ուսմունքի հիմնադրի և դրան հետեւզների մէջ հետգինեալ այն ասափճան տարբերութիւն է ստեղծւում, որ տարիներ, մանաւանդ դարեր անցնելուց յետոյ երբ համեմատում ես հիմնադրի սկզբունքը արգէն գործնական կեանքում յանուն այդ սկզբունքի կատարուածի հետ զրեթէ նմանութիւն իսկ չես գտնում ու տեսնում ես, որ խորթութիւնը, անհարազատութիւնը սկզբունքի և իրականութեան վարդապետի և իր աշակերտների մէջ շատ է աշք ծակող։

Պատճառը մի կողմից առհասարակ տեսականի և գործնականի ոչ կատարեալ համերաշխ, նոյն լինելն է, միւս կողմից վարդապետի ու աշակերտների, հետեւզների հոգեկան կարողութիւնների անհաւասարութիւնն է։ Ուսմունքի քարոզիչը նման դէպքերում լինում է հանճարեղ, մեծ տաղանդի տէր անձն, որն իր քարոզածը ըմբռնում է պարզ, հստակ ու լիովին, իսկ աշակերտ հետեւզները մեծ մասամբ 90% ով լինում են սովորական մահկանացուներ, որոնք անկարող են լինում բարձր սկզբունքները իւրացնել և անդիտակցարար յերիւրում, աղաւաղում են իրենց ուսուցչի քարողածը, չեն կարողանում լիովին ըմբռնել սկզբունքը և թարգմանում են սխալ, միակողմանի և ահա ստացւում է մի շփոթութիւն։ ուսմունքի հեղինակի մտքով անգամ չանցած գաղափարները աշակերտ—հետեւզները սկսում են քայլողել ու պաշտապանել յանուն իրենց վարդապետի։

Լաւագոյն օրինակը ասածներիս կարող է ծառայել կաթոլիկ եկեղեցին ու Քրիստոսի վարդապետութիւնը։ որ Փրկչի քարոզի սկզբունքների ու կաթոլիկ եկեղեցու մէջ մեծ տարբերութիւն կայ, մինչև հակասութիւն, պատմութեան ընթացքում այդ շեշտել են ու գրել հէնց նոյն եկեղեցու ծոցից ելածները։

Նոյնը պիտի տաել և այժմ սօցիալիզմի մասին։ Սա մի ուսմունք է, որի նոլատակն է ժողովրդի կեանքը կանոնաւորել ու երջանկութեան տանել և որպա՞ սօցիալիզմի

ուսուցիչները իրենց հոգու ոյժով կարողացել են ըմբռնել հպատակական չարիքի արմատը և այն հանապարհը, որով այդ չարիքը կվերանայ ու բարին կթագաւորէ, Մէկ կողմ թողնելով այն հանգամանքը, որ այդ վարդապետութիւնն էլ համաշխարային յառաջադիմութեան տեսակէտից մի օղակ է միայն ընդհանուր շղթայում և որ այդ ուսմունքն էլ դարեր յետոյ պիտի յայտարարուի հին, փթած և սրա դէմ ևս պիտի մաքառեն այն ժամանակի սերունդները, ասենք, որ մեր ժամանակում հասարակական կեանքի կարգաւորման համար առայժմ ամենից ուղիղ ուսմունքն է և մարդկութիւնը յանուն դրա պիտի պայքարէ ու դէպի բախտաւորութիւնը ձգտէ:

Սակայն ցաւու այն է, որ սօցիալիզմի վարդապետութեան հիմնագիրների և նրա հետեւորդ աշակերտների մէջ արդէն խորթութիւն է ստեղծուել, արդէն սկզբունքը մըթնացրել են, շփոթել և այդ նկատելի է ամենից աւելի ներկայ Ծուսաստանում, ուր որ կառավարութեան պլիսից մինչև վերջին ծառայողը սօցիալիստ են կամ ուզում են լինել և յանուն սօցիալիզմի դործում են, սօցիալիստական կարգեր են մտցնում։

Որ Ծուսաստանում սօցիալիզմի ուսմունքը շատ է իւրատեսակ քարոզւում ու խճողւում, որ սօցիալիզմն էլ յեղափոխականացրել են ու դարձրել քաօսային, ըստ իս դրան մի լաւագոյն ապացոյց կարող է լինել նաև այն, որ կրօնը այժմ համաձայն այդ ուսման վտանգաւոր տարր է նկատում ու դպրոցներում աւանդուող առարկաների ցանկից հանւում է, անշուշտ այն դիտումով, որ մատաղ սերունդը չպէտք է այլասերուի, որ սօցիալիստական կարգերում ապրող այդ ապագայ քաղաքացիները եթէ Փրկչի վարդապետութիւնը սովորեն կամ Սաղմոսի, Մարդարէների առակները գիտենան կդառնան հակասօցիալիստական, իսկ եթէ հին ու նոր Փիլիսոփաների՝ Սոկրատ, Պլատոն, Արքստուտել, Բուդդա, Կոնֆուցիոս և այլն ուսմունքներին ծանօթանան նրանց միտքը չի ալդորուի կամ եթէ իրենց ազգի պատմութեան դաւաճանների ու հե-

բաների արարքները սովորեն չեն փշանայ, չեն վաստուին նյդ սարօթիմակ, եթէ ոչ խիստ դատապարտելի նկատումով է, որ դպրոցներից կրօնը հանում են^{*}):

Եշանակալից է և այն, որ այժմեան սօցիալիստաները ոչ հետաքրքրում են, ոչ զբաղւում կրօնի հարցով, առնուազն արհամարհելով կրօնը, եթէ ոչ խուլ թշնամանանք սնուցանելով իրենց հոգում և միայն իրենց հետեօրդմասայի դայլոյթից խուսափելու համար չեն արտայայտում իրենց միտքը:

Սօցիալիզմի վարդապետութեան նմանօրինակ թիւրը ըմբռնման հետեանք է և ազգային հարցի խնդիրը. սօցիալիստ եղողը ոչտք է պարտաւորական ձեռվ լինի ազգային գաղափարին դէմ. վայ այն սօցիալիստին, որ կյանդընի ազգի ինքնուրոյն դարգացման գաղափարը պաշտպանել, նրան ոչ սօցիալիստ կհամարեն, նրան կեղծաւոր, ստոդ, քողարկուող կյայտարարեն:

Պարզ է, որ գժրախա սօցիալիզմը ուղղակի այլասերւում է մեր ժամանակի յեղափոխականներից շատերի ձեռքում ու դառնում է մի այլանդակուած վարդապետութիւն. տհաս մեկնաբանները իրենց են միայն սօցիալիզմի երդուեալ հաւատարիմ պատշտաններ յայտարարում ու սօցիալիզմի մենաշնորհը իրենք իրենց վերապահում:

Սաեղծաւում է այն դրութիւնը ինչ որ կաթոլիկ եկեղեցու և Փրկչի վարդապետութեան մէջ կայ, այն է կաթոլիկ եկեղեցին միայն իրեն է վերապահում Աւետարանի վարդապետութեան միակ ճշմարիտ քարոզչութեան մենաշնորհը. սակայն պատմութիւնը ցոյց տուեց թէ որքան ճշմարիտ է այդ ինքնավստահութիւնը և տեսնում ենք ինչ հետեանքի հասաւ: Նոյնը և կստեղծուի ու ստեղծւում է հետզհետէ սօցիալիզմի ուսմունքի նկատմամբ: Եթէ այսօր սօցիալ-դէմոկրատները իրենց են վերապահում ուղղափառ սօցիալիստ լինելու մենաշնորհը, տեսնում ենք,

*) Երազըներից յայտնի եղաւ, որ Տիկիսի քաղաքային դուման կրօնը քաղաքային դպրոցներից հանել է:

որ հէնց այդ նոյն ուղղափառութիւնը ունի իւր մեծամասնական վոքրամասնական, միջազգայնական ստորաբաժանութիւնը, միւս կողմից այդ նոյն ուղղափառութիւնի կողքին կան սօցիալիստ յեղափոխականներ, ոչ պակաս ուժեղ, ժողովրդական սօցիալիստներ և այլն:

Այս ստորաբաժանութիւնը պարզ առացոյց են որ սօցիալիզմի վարդապետութիւնը արդէն ջատում, բաժան բաժան է լինում, որ նա միօրինակ չի հասկացւում և նրա սկզբունքների մէջ կան հիմնական խնդիրներ, որոնց նկատմամբ լուրջ մտածողները խստօրէն միմեանցից տարբերում են:

Մի կողմ թողնելով այդ կուսակցական տարբերութիւնների խնդիրը, որը աշխարհահայեցքի, գիտական պարզաբանութեան լուրջ խնդիր է և ոչ թեթև, անձնական տրամադրութեան կամ պատահական գործելակերպի հարց, նկատենք, որ գրեթէ բոլոր սօցիալիստների համար էլ Ռուսաստանում կրօնի հարցը թիւր հասկացողութեամբ է ըմբռնւում ու մանաւանդ գործադրուում:

Այլ է արտաստանմանը, հէնց նոյն Գերմանիան, ուր ամենից աւելի է սօցիալիզմի վարդապետութիւնը ուսումնասիրուում, կրօնի հարցը թշնամական կամ անտարբեր վերաբերմունքի չէ արժանացել, նոյնը և Անգլիայում:

Եթէ պատճառն ուղենանք իմանալ մեզանում երկու գլխաւոր կէտերի վրայ կանդ կառնենք. նախ, որ մեզանում սօցիալիստական վարդապետութիւնը միայն շնորհիւ այս մեծ յեղափոխութեան է որ քաղաքացիական իրաւունք է ստացել ու մութ նկուղներից լոյս աշխարհ է եկել. սօցիալիստները այժմ միայն հնարաւորութիւն են ստացել անլեզակ վիճակից լեզակ վիճակի մէջ դտնուել ու ահվախ քարոզել. իսկ հոգեբանորէն շատ հասկանալի է, թէ ի՞նչպէս մարդ ծայրայեղութեան մէջ է ընկնում երբ երկար ժամանակի անազատ վիճակից ազատութիւն է ստանում, մանաւանդ երբ այդ ազատողն էլ հոգեպէս պատրաստ չէ իր ստացած ազատութիւնը ըմբռնելու և

դնահատելու, երկըորդ՝ մեղանում կրօնն ու եկեղեցին նոյնացնում են ու ստացւում է շփոթ վիճակ:

Եկեղեցին միուսաստանում նոյնպէս կաշկանդուած է եղել և յատկապէս ոռւս եկեղեցին միտպետականութեան ձեռքին զործիք է եղել իր ձնշման քաղաքականութեան համար և որովհետեւ կրօնը եկեղեցում է իր արժայայտութիւնը դանում, իր կերպարանքն ստանում ու մարմաւորուում, ուստի այժմ եկեղեցու նկատմամբ անտարբեր կամ թշնամական դիրք բռնելով, կրօնի նկատմամբ էլ նոյնն են անում, կրօնն էլ վտանգաւոր են յայտարարում և ուզում են վտարել գովրոցից գուցէ և ընդհանրապէս կեանքից, եթէ հնար ունենանս:

Որ կրօնի ու եկեղեցու մէջ սերտ կատ կայ, որ եկեղեցին կրօնի գործնական արժայայտութիւնն է ու նրա թանձրացումը այդ կատկածից դուրս է, բայց, որ կրօնի ու եկեղեցու մէջ էլ կայ հիմնական տարբերութիւն, որ մաքուր տեսական սկզբունքի ու այդ սկզբունքի թանձրացման կերպարանաւորման մէջ էլ խոշոր տարբերութիւն կայ այդ էլ բոլորիս յայտնի է:

Մեր սօցիալիստները դեռ այնքան միակողմանի են եթէ ոչ միամիտ, որ այդ տարբերութիւնը չեն նկատում ու աշխատում են կրօնի դէմ էլ սլայքարել, այն ուսմունքի, որը հենց իրենց քարոզած սօցիալիզմի հիմքն է կազմում։ Տարօրինակ թող չթուայ դիտական սօցիալիզմի ախոյեան աշակերտներին, որ առենք, թէ քրիստոնէական վարդապետութեան քարոյական սկզբունքը՝ «Սիրեսցես զընկեր քո, իրքի զանձն քո», սօցիալիստական վարդապետութեան հիմքն է։

Կարդացէք ու նայեցէք ձեր շուրջը և կտեսնէք, որ ուստական մեծ յեղափոխութեան ուահվիրանները միայն ընկերոջ, ժողովրդին իրենց անձի չափ սիրելու բուռն դացումից է, որ տարիների բանտ, աքսոր, կախաղան են յանձն առել։ Այլասիրութեան ուժեղ գիտակցութիւնն է վերջ ի վերջոյ նրանց թե տուել, ողևորել անդուլ աշխատելու բանուորի ու դիւղացու աղատութեան համար։

Ոչ մի գիտութիւն, դրանց թւում և գիտական սօցիալիզմի վարդապետութիւնը չի կարող ապացուցանել գիտականօրէն, որ բանուորը որքան և շահով կապուած է բանուորի հետ, որ գիւղացիք դասակարգային գիտակցութիւն ունեն, պէտք է իրենց անձը զոհեն ընկեր բանուորի կամ գիւղացու համար։ Շահի վարդապետութիւնը դասակարգային գիտակցութեան հիմքն է, իսկ շահը շահ է պահանջում և ոչ անձնազոհութիւն։ Դասակարգային շահերի միութիւնը դասակարգին կարող է միացնել բայց նրանց չի ասի գնացէք ձեր անձը զոհէք, ի՞նչ օգուտ այս կամ այն բանուորին անձնապէս, որ նա ինքը զոհուի, իսկ ընկերը շահուի։ Դասակարգային շահի մէջ միշտ անձնական շահն էլ կայ. իսկ անձնական շահը այլասիրութեան հիմք չէ, այլ նեղ եսասիրութեան։

Սօցիալիզմի վարդապետութիւնը գիտական հիմք ունի, երբ նա միայն շօշափում ու բացատրում է դասակարգերի յարաբերութիւնը ու քանի դեռ նա նեղ սահմանում է։ Բայց սօցիալիզմը պաշտպան է վերջի վերջոյ բոլոր մարդկանց. սօցիալիզմը չի ասում միայն սլրուետարիատը երջանիկ լինի. այլ որ բոլորը երջանիկ լինեն, դրանց թւում և դրամատէրերը, բուրժուաները, երբ սրանք էլ կհրաժարուեն կամ կստիպուեն հրաժարուել իրենց անարդար շահերից, նեղ անձնական շահից։

Բուրժուայի նեղ անձնական շահի դէմ իրաւացիօրէն մաքառում է սօցիալիզմը, որովհետեւ նա լայն հաւասարութիւն է ուղում մացնել կեանքի մէջ. անձնական շահի տեղ հանրականն է դնում, եսասիրութեան դէմ այլասիրութիւնն է պաշտպանում, իսկ այս արդէն քրիստոնէական կրօնի սկզբունքն է։

Աւետարանի սկզբունքներին ծանօթը, ուսումնասիրածը լաւ գիտէ, որ Փրկիչը հէնց նոյն չքաւոր, զրկուածների սլաշտպանն էր և դասակարգային շահի տեղ, հանրականն էր պաշտպանում։ Իսկ Փրկչի վարդապետութիւնը բարոյական է և ոչ գիտական, բարոյական վարդապետութիւնը գիտական հիմնաւորման չի ենթարկւում, որով-

հետեւ կրօնը գիտութիւնից օգտուում է, գիտութեան տուեալ-ներով պարզաբանուում է բայց չի հիմնաւորւում։ Գիտութիւնը անժխտելի, փորձնական ապացոյցներ է բերում իր առաջադրած սկզբունքը հիմնաւորելու, բարոյական վարդապետութիւնը, կրօնը այդ չունի և չի էլ ունենայ։ Հոգու աշխարհի այդ ամենավսեմ արտայայտութիւնը, չեանքի սկզբի ու վախճանի այդ զարմանալի ներդաշնակութիւնը փորձի, չափի, կշռի տակ չի դրւում։ Սօցիալիզմը կենսափիլիսոփայութիւն է, կեանքի վարդապետութիւն է, թէև ժամանակաւոր ու միայն որոշ խնդիրների նկատմամբ։ շատ բնական է որ նրա հիմքն էլ պէտք է բարոյական վարդապետութիւնը լինի և է։ այս մասին երկու կարծիք չկայ սօցիալիզմի մեծ վարդապետների հայրենիքում։

Մեղանում այդ մեծ հիմքը մոռացութեան են տալիս և այդ բաւական չէ, նոյն իսկ անդիտակցաբար պայքարում են, չեն ուզում, որ դպրոցում կրթուող սերունդը բարոյական վարդապետութեան հիմքերին ծանօթ լինի ու նրանցով կըթուի, դաստիարակուի։ Զէ՞ որ այդ սկզբունքը արմատացնելով է միայն, որ ապագայ սերունդը ոյժ կզգայ իւր մէջ շարունակելու ազատագրութեան գործը։ Միթէ մերօնք այնքան միամիտ են, որ կարծում են ազատագրութիւնը վերջ, վախճան ունի, որ այժմ եթէ բոնապետութիւնը տասլալուեց, ազատագրութիւնը վերջացաւ։ Ազատագրութիւնը միշտ կայ ու կլինի քանի մարդը կայ, իսկ ազատագրութեան համար անխոնջ ծառայողներ ունենալու լաւագոյն միջոցն է երիտասարդ սերնդի բարոյական դաստիարակութիւնը։ Հետեւալէս քրիստոնէական կրօնի-բարոյական վարդապետութեան աւանդումը դպրոցից հանել կնշանակէ սօցիալիզմի վարդապետութեան հիմքը քանդել։

Կայ խնդրի և մի այլ կողմը։ Մեղանում կրօն ասելով հասկանում են այն դաստագրքերի նիւթը, որոնցով դպրոցներում երեխաներին դաս են տալիս։ Այդ սխալ ըմբռնում է, որի դէմ բողոքել պէտք է ուժգինս։ Նախ

հէնց մեր մամուլում ըազմիցս այդ դասագրքերի, կրօնի ուսուցման այդ ծրագրի դէմ բողոքել են նոյն խոկ կրօնուսոյցները. Երկրորդ՝ կրօնի դասաւանդման համար մեղանում հնար չէ եղել հիմնական փոփոխութիւններ առաջարկել միապետական ոչժիմի ոլատճառով: Աչ ոք չէ ասում թէ Սահակ քհ. Սահակեանի կամ մի ուրիշի դասագիրքը ճիշտ որ լաւ է, կատարելութիւն է, հեղինակն ինքն այդ դիտէ և խոստովանում է, բայց նա ստիպուած է եղել այդ ձեռվ կազմել: Մեղանում փոխանակ խնդիրը լուրջ ուսումնասիրելու և կրօնի ծրագրի, դասագրքի, աւանդման փոփոխութիւնները պահանջելու միանգամից կրօնը դուրս ձգելու վճիռն են անում:

Չէ որ ոչ ոք առանց կրօնի չէ ապրում. չէ որ առանց բարոյական սկզբունքի ոչ պետութիւն, ոչ արդարութիւն, ոչ հաւասարութիւն կարող է գոյութիւն ունենալ: Ուրեմն ի՞նչպէս կարելի է կեանքի հիմք եղող այդ սկզբունքը վտարել դպրոցից:

Յայսօր ոչ մի դիտնական, ոչ մի ուսմունք Փրկչի բարոյական վարդապետութիւնը չէ ժխտել, որքան և Աւետարանի, Սուրբ Գրքի այս ու այն քննադատութիւնը եղել է: Փրկչի վարդապետութիւնը կայ ու կմնայ մարդկութեան բարոյական զարդացման հիմքը. այս այսպէս լինելուց յետոյ հիմնովին սխալ է այդ համաշխարհային վարդապետութեան դասաւանդումը դպրոցից հանելը: Այլ ինդիր է թէ ի՞նչպէս, որ դասարանից, ի՞նչ ձեռնարկով ու ծրագրով պիտի աւանդել. դրանք հարցերեն, որոնցով սօցիալիստներն իրենք պարտաւոր են զբաղուել, որովհետեւ իրենց քարոզած ուսմունքի հիմքն էլ այդ է, իրենց քարոզի նպատակն էլ դէպի նոյնն է տանում վերջի վերջոյ:

Վերջապէս մի երրորդ պատճառ կայ, որի հիման վրայ սօցիալիզմի քարոզողները պարտաւոր են զբաղուել կրօնի հարցով և ոչ թէ յայտարարել, թէ մենք ձեռնպահ ենք կամ դա անձնականի դործ է, ով ինչ ուզում է անէ: Գիտենք, որ կրօնների բարոյական վարդապետու-

թիւնը տարբեր են, գիտենք որ հեմանոսը չի ընդունում ընկերոջ անձի գնահատութեան այն չափը, որը քրիստոնէութիւնն է տալիս. գիտենք որ մահմեդականի համար գեաւուրը պիղծ է և սրա սեփականութիւնը ձեռնամխելի. դիտենք, որ սեռական բարոյականութեան, դողութեան նկատմամբ կրօնները տարբեր չափեր ունեն: Միթէ սօցիալիստի համար նոյն է, թէ ի՞նչ սկզբունք կդաւանէ գիւղացին ու բանուորը. միթէ նրա քարոզածը դէմ չի լինի բարոյական այս ու այն սկզբունքը դաւանողի հասկացողութեան:

Կամ սօցիալիզմը չի ընդզբկում մարդու երջանկութեան ձգտումը լիովին, չի տնօրինում հասարակական բոլոր յարաբերութիւնները, ուրիմն նա յանուն ազգերի ժողովուրդների բախտաւորութեան, համերաշխութեան, ազատութեան չպէտք է քարոզուի, կամ եթէ քարոզւում է և այդպէս էլ է, ապա նա չի կարող անտարբեր լինել դէպի կրօնի հարցը և մի կողմ քաշուել ու թողնել որ ով ինչ ուզում է անէ:

Ի՞նչպէս «Արարատ»-ի նախորդ համարում կրօնական ճգնաժամը յօդուածում շեշտել էի. գիւղացին, բանուորը բացի տնտեսական շահերից ունի և կրօնական աշխարհ, այժմ ևս պէտք է կրկնեմ, որ այդ աշխարհը կայ և նա ևս արժանի է ուշադրութեան քննութեան ու վերածնութեան:

Սօցիալիստը չպէտք է աչք գոցէ կրօնի հարցի նկատմամբ, քանի որ դա համամարդկային և ուժեղ գործօն է ու հասարակական կեանքում, փոխյարաբերութիւնների մէջ մեծ դեր է կատարում: Կրօնի վարդապետութիւնը քարոզւում է և քարոզում են եկեղեցում, դուրսը, դրանով մտքեր են պատրաստում, մաքեր արծարծւում, ու մարդկանց զիտակցութիւնը այս ու այն ձեռվ կազմակերպում: Միթէ սօցիալիստի համար այդ ամենը անտարբեր պիտի լինի ու երես թեքի մի կողմ քաշուի, յայտարարելով որ դա խղճի գործ է, ով ինչ ուզում է անէ, ինչպէս ուզում է հաւատայ, մտածէ: Հասարակական կեանքը

մի ամբողջութիւն է և այդ ամբողջութեան մէջ կրօնը ամենառուժեղ գործօններից մինն է. սօցիալիզմը հասարակական կեանքի կարգաւորման խնդրով զբաղուելով բնականաբար այդ գործօնով պէտք է հետաքրքրուի:

Իմ խորին համոզմունքն է, որ Փրկչի բարոյական վարդապետութեան քարոզը և դասաւանդումը դպրոցներում, եկեղեցում, դրսում անհրաժեշտ է հասարակական զարգացման տեսակէտից, հէնց այն սօցիալիզմի տեսակէտից, որ այս վարդապետութեան հանձարեղ քարոզիչներին են տուել. հետեապէս պէտք է կրօնը դպրոցներում դասաւանդուի, պէտք է լինի անհրաժեշտ առարկայ, իսկ թէ ի՞նչ ծրագրով, ո՞ր դասարանից, ի՞նչ նիւթով դրանք արդէն այլ հարցեր են. հիմնական դադարքարը նախ պէտք է պարզել և ընդունել, ապա մանրամասնութիւններով զբաղուել:

Սօցիալիզմը քրիստոնէական վարդապետութեան հակառակ չէ, այլ վերջինովս լրացւում է և հիմնաւորւում, հետեապէս սօցիալիստները իրենց ուսմունքի ամբողջութեան, յաջողութեան տեսակէտից պէտք է կրօնի հարցը լրջմիտ քննութեան առնեն և ոչ թէ ձեռքերը ծալեն մի կողմ նստեն: Առանց կրօնի կեանքը դոյցութիւն չունի, այս պիտի երբէք չմոռանանք:

Գիւտ վարդապէս

1 նոյեմբ. 1917 թ.

Մ. էջմիածին

